10209

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«08» 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0089-22

Ձեռնարկողը՝ *«ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ*
Արարատի մարզ,
Մասիս-Ռանչպար մայրուղի 3

Գործունեությունը՝ ***Նորամարգի ավազի հանքավայրի 1-ին տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ, Մասիս (Նորամարգ) համայնք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0089-22

< 08 > 07 2022թ.

Արարատի մարզի Նորամարգի ավազի հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս (Նորամարգ) համայնք

Արարատի մարզի Նորամարգի հանքավայրի 1-ին տեղամասի 20.4հա մակերեսով տարածքում նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն, նպատակ ունենալով պարզել ավազի և կոպիճի որակական հատկանիշները, որոնք պետք է բավարարեն համապատասխան տեխնիկական պահանջներին՝ որպես շինանյութ օգտագործելու համար:

Նկարագրական մաս.

Նորամարգի ավազի հանքավայրի 1-ին տեղամասը տեղակայված է Արարատի մարզում՝ Նորամարգ գյուղից 2.2կմ հյուսիս-արևմուտք, Սև ջուր և Հրազդան գետերի միջև, և կապված է Հրազդան և Սև գետերի ժամանակակից բերվածքների հետ: Տեղամասը գտնվում է 824.5-828.2մ բացարձակ բարձությունների վրա և ներառված է Նորամարգ համայնքի սահմաններում:

Հետախուզվող տեղամասը առաջացել է Սև ջուր և Հրազդան գետերի մեանդրման արդյունքում և կապված է Հրազդան գետի վերին չորրորդականի դարավանդային նստվածքների հետ, հանդիսանում է դարավանդային տիպի հանքավայր, որի հիմնական մակերեսը զբաղեցնում են Սև ջուր և Հրազդան գետերի մշտական հոսքի մակարդակից 1-3 մ բարձրություն ունեցող վերհունային դարավանդները: Դարավանդները կազմված են հիմնականում ալյուվիալ առաջացումներից, որոնք ներկայացված են երբեմն տղմակավային փոքր ենթաշերտեր և ոսպնյակներ ներփակող ավազներով, կոպճային տարահատիկ ավազներով, երբեմն մանրագլաքարերի պարունակությամբ: Տեղամասը գտնվում է Արարատյան իջվածքում, որտեղ ապարները ծածկված են ստորին չորրորդականի ցամաքային և լճային նստվածքներով, որոնք էլ իրենց հերթին ծածկվում են Արաքս գետի ժամանակակից բերվածքներով: Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով գետահուներում կուտակվել են

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆ ՀՈՍ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կոպճի, ավազի և կավի հզոր հաստվածքներ: Հրազդան գետի հովտի ալյուվիալ նստվածքների հզորությունը հասնում է մինչև 70մ:

Նախնական ակնադիտական հետազոտություններով պարզվել է, որ օգտակար հաստվածքում ավազը տարակազմ-հատիկային է: Հատիկներն ըստ ձևի անկյունավոր են, որոնց մակերևույթը թույլ հղկված է: Ավազները կանաչավուն և կանաչա-մոխրավուն գույնի են: Կոպճային նյութը օգտակար զանգվածում նույնպես հղկված է, ունի կլորավուն և իզոմետրիկ ձևեր, որոնց հիմնական մասն ունի 5-10մմ չափսեր: Տեղամասը երկրաբանական կառուցվածքի բարդությամբ դասվում է ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի 1-ին խմբին:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընկերությանը երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրած տարածքը զբաղեցնում է 20.4հա մակերես և սահմանափակվում է ստորև նշված ծայրակետային կոորդինատներով (ARM WGS – 84 համակարգով).

1. Y =8450182.31 X =4434129.22
2. Y =8450226.61 X =4434178.21
3. Y =8450229.83 X =4434186.11
4. Y =8450225.54 X =4434197.03
5. Y =8450260.98 X =4434228.27
6 . Y =8450267.98 X =4434240.71
7. Y =8450225.79 X =4434307.98
8. Y =8450174.45 X =4434383.89
9. Y =8450161.66 X =4434398.31
10. Y =8450152.26 X =4434401.06
11. Y =8450138.10 X =4434390.95
12. Y =8450063.15 X =4434315.12
13. Y =8450034.12 X =4434399.20
14. Y =8449895.17 X =4434404.92
15. Y =8449893.26 X =4434439.30
16. Y =8449899.93 X =4434485.81
17. Y =8449921.76 X =4434530.06
18. Y =8449945.98 X =4434567.84
19. Y =8449981.03 X =4434588.21
20. Y =8450043.52 X =4434609.06
21. Y =8450099.24 X =4434621.17
22. Y =8450222.00 X =4434599.63
23. Y =8450254.32 X =4434584.55
24. Y =8450301.26 X =4434566.30
25. Y =8450324.45 X =4434553.27
26. Y =8450357.84 X =4434532.18
27. Y =8450392.79 X =4434504.37
28. Y =8450425.17 X =4434494.10
29. Y =8450480.03 X = 4434505.42
30. Y =8450529.88 X =4434573.14
31. Y =8450542.35 X =4434578.11
32. Y =8450560.11 X =4434576.88
33. Y =8450637.59 X =4434534.81
34. Y =8450642.50 X =4434517.53
35. Y =8450644.56 X =4434498.43
36. Y =8450641.01 X =4434437.62
37. Y =8450641.01 X =4434412.09
38. Y =8450644.13 X =4434394.43
39. Y =8450639.72 X =4434369.13
40. Y =8450632.03 X =4434344.21
41. Y =8450608.37 X =4434317.75
42. Y =8450536.66 X =4434311.94
43. Y =8450481.20 X =4434307.86
44. Y =8450460.33 X =4434302.95
45. Y =8450415.05 X =4434300.87
46. Y =8450387.96 X =4434288.16
47. Y =8450371.81 X =4434268.66
48. Y =8450354.05 X =4434242.11
49. Y =8450345.29 X =4434232.65
50. Y =8450331.92 X =4434200.75
51. Y =8450338.04 X =4434165.04
52. Y =8450352.93 X =4434134.74
53. Y =8450375.39 X =4434098.24
54. Y =8450406.98 X =4434064.02
55. Y =8450445.61 X =4434026.75
56. Y =8450440.64 X =4433996.97
57. Y =8450424.30 X =4433996.97
58. Y =8450412.07 X =4434001.04

02543163
ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հետախուզումը նախատեսնվում է իրականացնել մինչև 6.5 մետրից մինչև 8մ խորությամբ խորությամբ 52 հատ հետախուզահորերի միջոցով, նմուշարկման աշխատանքների զուգորդությամբ: Հետախուզահորերի անցումը կկատարվի էքսկավատորով: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը՝ 385.0գծ.մ ծավալով: 385.0 գծ.մ ծավալից 26,15 մ^3-ը ներկայացված է 4-րդ կարգի դելյուվիալ-ալյուվիալ նստվածքներով, 343,25մ^3-ը՝ 6-րդ կարգի ավազներով և կոպճով, 15,6մ^3-ը՝ 6-րդ կարգի կավավազներով: Յուրաքանչյուր հետախուզահորի մակերեսը կազմում է 6.0մ^2 (2x3մ): Հետախուզահորերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 312.0մ^2: Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 2310մ^3 ծավալով ավազի կուտակի, որից 156.0մ^3 դելյուվիալ-ալյուվիալ առաջացումներ: Փաստագրումից և նմուշարկումից հետո հանված զանգվածը հետ է լցվելու հորերը, կատարվելու է հարթեցում, փխրեցում և ռեկուլտիվացիա: Աշխատանքները կկատարվեն ձեռքով, ընկերության աշխատակիցների կողմից:

Դաշտային պայմաններում ավազների բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար հետախուզահորերի անցմանը զուգընթաց նախատեսվում է դաշտային պայմաններում որոշել կուտակի բնամասերում ծավալային և ծավալալիրքային զանգվածների, ինչպես նաև փխրեցման գործակիցը:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզահորերի 2310մ^3 ծավալից 50մ^3-ը օգտագործել կուտակի բնական խտության (բնամասում), ծավալալիրքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար: Նախատեսվում է հետախուզափորվածքներից վերցնել նմուշներ՝ 52 ակոսային նմուշ: Նմուշարկումը կկատարվի կուտակի ամբողջ հզորությամբ, ակոսի հատույթը (10x10)սմ: Նմուշները պետք է վերցվեն օգտակար հանածոյի շերտին ուղղահայաց: Հետախուզահորերից վերցված նմուշներից յուրաքանչյուրի կշիռը բազմափուլ կրճատումից հետո նախատեսվում է հասցնել 15կգ-ի:

Քիմիական անալիզների և միներոլոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է համապատասխանաբար վերցնել 4-ական նմուշ: Նախատեսվում է հետախուզահորերի անցմանը զուգահեռ դաշտային պայմաններում որոշել ավազի ծավալային և ծավալալիրքային զանգվածները:

Ուսումնասիրվող տեղամասում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ երևակման տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները՝ ջրաբեր հորիզոնների առկայությունը, պարզելու համար: Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել տեղամասի ապարների կազմը, կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրցեսները: Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է՝ հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան ուսումնասիրել և նկարագրել դրանք, ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Նախագծված աշխատանքների իրացումը հնարավոր կդարձնի տալ օգտակար հանածոյի որակական գնահատականը, ինչպես նաև «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի»

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ЕРЕВАН ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հաշվի առնելով, որ հետախուզափորվածքների միջև հեռավորությունները տատանվում են 12.5-355մ սահմաններում, հնարավոր է հետախուզված պաշարները գնահատել արդյունաբերական C_1 կարգով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կպահանջվի խմելու և տեխնիկական ջուր, որը ավտոտրանսպորտով կբերվի մոտակա բնակավայրից:

Տեղամասում, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը.

«Վի Ընդ Էմ» ՍՊԸ-ի կողմից Նորամարգի հանքավայրի 1-ին տեղամասի սահմաններում ավազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում աննշան ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային օդ. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու է գազերի և փոշու արտանետման աղբյուր: Կապիլյար ներծծման հաշվին ավազի կուտակը գտնվում է խոնավ վիճակում, ինչի հետևանքով երևակման տարածքում մակերևութային փորվածքների անցման, նմուշառման և փորձնական հանույթի ժամանակ փոշեգոյացում չի կատարվելու: Փոշեգոյացում կլինի միայն երևակման տարածքին մոտեցնող ճանապարհների վրա:

Ջրային ավազան. Աշխատանքների հետևանքով՝ ջրերի կապիլյար ներծծման համակարգի գործունեության հետևանքով, կարող է դրսևորվի աննշան ազդեցություն Հրազդան գետի ջրերի պղտորության, կախյալ մասնիկների պարունակության վրա:

Հողային ծածկույթ. Հողային ծածկույթի վրա դրսևորվելու է որոշակի ազդեցություն՝ կապված հետախուզահորերի անցման հետ: Հողաբուսական շերտը խախտվելու է 312մ^2 մակերեսի վրա: Հողերի խտացում և տրորում առաջանալու է մեքենաների տեղաշարժի հետևանքնով:

Բուսական և կենդանական աշխարհ. Տեղամասի բուսականությունը ներկայացված է անապատային աղասեր բուսականության բնորոշ ֆոնային տեսակներով, որոնք լայն տարածված են Արարատի և Արմավիրի մարզի անապատային լանդշաֆտներում: Խոշոր կաթնասունների ապրելավայրեր հայցվող տարածքում չկան: Տարածքում չեն արձանագրվել ՀՀ Բույսերի Կարմիր գրքում և ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ, հետևաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները տարածքի կենսաբազմազանության վրա ազդեցություն չեն ունենալու:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ. ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը գտնվում են հայցվող տարածքից համապատասխանաբար 20կմ, 19կմ և 21կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքում առկա չեն բնության հուշարձաններ:

Պատմամշակութային հուշարձաններ. Այսպիսիք ավազի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում չկան, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակության ժառանգության օբյեկտների վրա:

Թափոնների գոյացում. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ տարածքում առաջանալու են հետևյալ երեք տիպի թափոնները՝

- մակաբացման ապարներ, որոնք ներկայացված են 0.5մ հզորությամբ և 156մ³ ծավալով ալյուվիալ-դելյուվիալ ապարներով (հողային շերտ): Այս առաջացումները կուտակվում են փորվածքի հարևանությամբ, նմուշարկումից և փաստագրումից հետո ռեկուլտիվացիոն աշխատանքներում կիրառելու համար: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:
- նավթամթերքների մնացորդներ՝ օգտագործված դիզելային յուղերից:
- չտեսակավորված կենցաղային աղբ:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունների նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների բնութագիրը. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքների ժամանակ էքսկավատորի և աշխատանքները սպասարկող մեքենաների վրա արտանետվող թունավոր նյութերի մաքրման համար ֆիլտրերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակների:
- Հետախուզական հորերի տարածքից 0.5մ հզորությամբ հողային շերտի հեռացում, կուտակում փորվածքի հարևանությամբ կարճաժամկետ կտրվածքով, այնուհետև օգտագործում ռեկուլտիվացիոն աշխատանքների ժամանակ: Փաստագրումից և նմուշարկումից հետո հանված զանգվածը հետ է լցվելու հորերը, կատարվելու է հարթեցում, փխրեցում: Ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 312մ², վերականգնման ենթակա ծավալը՝ 156.0մ³ /յուրաքանչյուր հորինը՝ 3.0մ³/ Աշխատաները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի ընդհանուր գումարը կկազմի 280800 դրամ:
- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում:
- ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով՝ ջրային աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելման նպատակով պետք է սահմանվի ջրապահպան գոտիներ: Այս պահանջը հաշվի առնելով հետախուզահորերը տեղադրված են գետից նվազագույնը 10մ հեռավորության վրա:
- Տեղամասի տարածքի նավթամթերքներով աղտոտումը կանխելու նպատակով հաստվածքի մակերևույթին էքսկավատորի շարժման ուղեծրով կտեղադրվեն երկաթբետոնե տիպային սալիկներ:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն

ՀՀ ԲՆՕՀՍ ՍՏԳԱԿԱՆ ՓՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ

մակարդակը չպետք է գերազանցի 95դբա, իսկ աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դբա:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
- նավթամթերքներով երևակման տարածքի աղտոտվածության մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ,
- Հրազդան գետի ջրերի որակի մշտադիտարկում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ,
- տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում:

Մշտադիտարկումների կատարման համար տարեկան նախատեսվում է մասնահանել 280.0հազ.դրամ :

Պատճառաբանական եզրահանգումներ.

Ամփոփելով փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ հայտը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան: Համաձայն հայտի ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի՝ ավազի և կոպիճի, պահանջարկի բավարարման նպատակով:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին մասնակցել են արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, մարզպետարանը: Օրենսդրությամբ սահմանված կարգով Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ.

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
2. Կատարել հայտով ամրագրված միջոցառումների և մոնիթորինգի իրականացման աշխատանքները, դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ, պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Աշխատանքների կատարման ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող, կենդանական և բուսական աշխարհ և այլն), ինչպես նաև մակերևույթային և լեռնային ապարների տեղաշարժի մոնիթորինգի արդյունքները և հետնախագծային վերլուծության ծրագիրը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական շահագրգիռ մարմիններին և հանրությանը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ РА
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

4. Աշխատանքների կատարման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:
6. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը՝
- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- կեղտաջրերի հավաքում դաշտային հորատիպ զուգարանում,
- խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում, հողի բերրի շերտի պահեստավորում, ծածկում (հողաշերտով), աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- մթնոլորտային օդի աղտոտվածության պարբերաբար հսկողության սահմանում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կատարման միջոցով,
7. Իրականացվող աշխատանքների ընթացքում պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգի ավազի հանքավայրի 1-ին տեղամասի 20.4հա մակերեսով տարածքում նախատեսվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Կ. Հարությունյան